

# ԽՆԿՈ ԱՎԵՐ (ԱԹԱՔԵԿ ԽՆԿՈՂԱՆ) , ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԽՆԿՈ ԱՎԵՐ (1870-1935), մանկական բանաստեղծություններ:

## ԲԿԼԻԿ ՃԿՆԻԿ

Ձկնի՛կ, Լո՛ղ տուր, Լո՛ղ արա,  
Դրսի որսը թո՛ղ արա,  
Իջի՛ր ջրի հատակը,  
Մինչև անցնի վտանգը:

Տե՛ս փորձանք կա քո գլխին,  
Մի Լավ մտիկ երեխին՝  
Որդ է խփել իր կարթին,  
Չմոտենաս էդ որդին:

Ինձ չԼսեց ձկնիկը,  
Ինձ չԼսեց բկլիկը,  
Հո՛պ, կուԼԼ տվեց նա որդը,  
Կարթը մնաց կոկորդը:

## ՄԵՂՈՒՆ

Պզան, պզան, պզպզան,  
Պստիկ մեղու տզտզան,  
Դաշտ ու հովիտ կշրջես,  
Բարձր սարեր կթռչես,  
Սուսան, սմբուԼԼ կծծես  
Ու ոտքերով թավամազ  
Փոշի առած՝ տուՆ կգաս:

### **Ժամացույց**

Ա՛յ ժամացույց, ժամացույց,  
Դու չե՞ս հոգևում խոսելուց.  
Մի բերան հա՛ թիկ, հա՛ թակ,  
Բա քեզ չունե՞ս մի տատիկ,  
Որ քեզ ասի՛ սո՛ւս արա, Գլուխներս դու տարար,  
Հերի՛ք խոսես ու շարժես  
Աչքերդ ճոճակակ,  
Քո չափ թե որ ես խոսեմ,  
Տատն ինձ կասի չաչակակ:

### **Մայիս**

Գարնան ամիս,  
Սիրո՛ւն մայիս,  
Նախշո՛ւն նկար,  
Բարո՛վ եկար:

Եկար, բերիր  
Վարդը կարմիր,  
Սուսան, սմբուլ,  
Սիրուն բլբուլ:

### **Լուսին**

Լուսին, լուսին, լուսերես,  
Ինչքա՛ն սիրուն, կլոր ես:  
Լույս ես տալիս գիշերով  
Քո վառվռուն թշերով:

### **Ձմեռ պապի**

Արի՛, արի՛  
Ձմեռ պապի,  
Սպիտա՛կ հագի,  
Սպիտա՛կ կապի:

Դաշտ ու անտառ,  
Գետ ու գետակ,  
Այս ամենը  
Ա՛ն թևիդ տակ:

Սարուժ, ծորուժ  
Սուլի՛ր, երգի՛ր,  
Հեքիաթ ասա  
Հետաքրքիր:

Գցիր կամուրջ,  
Փռիր կարպետ,  
Այ անուրագ,  
Անձեռ վարպետ:

### **Ձմեռ**

Ծառը մերկացավ,  
Չրկվեց տերևից,  
Ձյունի փաթիլներ  
Իջան վերևից:

Ձյուն ու ցուրտ եկան,  
Առու, գետ լռեց,  
Իր արծաթ գորգը  
Ձմեռը փռեց:

Ձյունը ծնկահար  
Նստեց մեծ ճամփին,  
Սպիտակ հյուսերը  
Կիտեց գետափին:

### **Ծիծեռնակին**

Դու կապուտակ ծովով արի,  
Թեթև, թեթև թևով արի,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան երգով, կանչով արի:

Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Սևիկ-մևիկ աչիկ ունես,  
Մկրատաձև պոչիկ ունես,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:

Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,  
Առանց ծիծեռ գարուն չկա,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի:

Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

### **Նկարիչ**

Օյ, օյ, օյ, բուք-բորան  
Եկավ ծածկեց պատուհան:  
Նկարիչ է, նկարիչ,  
Ոչ ձեռք ունի, ոչ գրիչ,  
Ոչ ներկ ունի և ոչ տուփ,  
Նկարում է ծառ ու թուփ.  
Ճաղկենկար է անում,  
Ապակու վրա նկարում:  
Այ, եղպես է բուք-բորան,  
Կուզե՞ս տեսնել դու նրան:  
Թե տղա ես, դուրս գնա,  
Քիթդ այնտեղ կմնա:

### **Եղևնի**

Գունատ աշուն է,  
Էլ չկա թռչուն,  
Քամու թևերին  
Տերևն է թռչում:

Միայն եղևնի  
Այնտեղ՝ խոր հովտում,  
Կանաչ է հագել,  
Աշնան դեմ ժպտում:

### **Մկների ժողովը**

Սով էր, սով էր մկստան,  
Կառվի ձեռքից լկստան,

Գզիրն ընկա՛վ դռնեդուռ,  
Էլ չթողեց տուռն, կտուր,  
Ջահե՛լ, ահե՛լ գեղովի,  
Ջոջերին ջոկ, տեղովի  
Կանչես, բերեց ժողովի,  
Թե ինչ անես, որ կատվեն  
Մի հնարքով ազատվեն:  
Եկան գյուղի ջոջերը,  
Երկար, բարակ պոչերը,  
Մասնակցեցին խորհրդին,  
Մի մուկ խոսեց իր հերթին.  
– Լսե՛ք, մկներ ցեղակից,  
Չուրե՛մ որդի, կողակից,  
Ես միա նտեր ծերուկ եմ,  
Բայց պատվավոր մի մուկ եմ,  
Պակսեց ուժը իմ ոտի,  
Պետք է մեռնեմ անոթի,  
Սովն է չոքե՛լ դռանը  
Ա՛խ մռռանը, մռռանը,  
Վեր է ընկե՛լ մառանը,  
Ինչքան ասես նազ անի,  
Ստից սատկի, տազ անի,  
Մուկ տեսնե՛լիս վազ անի,  
Գլխից բռնի, կախ անի,  
Թաթովը տա, խաղ անի,  
Ուտի, քե՛ֆը չաղ անի,  
Եսպես զուլու՛մ ու կրակ,  
Դեռ աչքերն էլ ջուկստ ճրագ:  
Բայց թե ազնիվ մեր ցեղը  
Կորչե՛լու է գուր տեղը.  
Ցավն էլ ունի իր դեղը:  
Այ, բերե՛լ եմ ես մի զանգ,  
Ծափ, ծլնագոց,  
Մեջը՝ զնագոց:  
Կատվի վզից մենք կախ տանք,  
Որ ինչքան էլ օրորա,  
Որ ինչքան էլ շորորա,

Ստից սատկի, տազ անի,  
Գալն իմանանք գազանի:  
Է՛, գանգը ո՞վ կախ անի.

- Ալո, դոլ:
- Ալոն տանի՞:
- Բալո դոլ:
- Բալոն կախե՞:
- Չալո, դոլ:
- Չալոն կաղ է:
- Մսոո, դոլ:
- Մսոոն կարճ է:
- Փսոո, դոլ:
- Էդ Էլ իհի՞ղճ է:
- Համբո, դոլ:
- Ես տկար եմ:
- Չամբո դոլ:
- Ասենք, տարա,

Բա որ կատուս գա ինձ վրա՞:

- Բոոն, Խոոն թող մեկից  
Բռնեն կատվի քամակից:
- Ի՞նչ է խոսում չոր գանգը,  
Լավ է՝ դոլ տար Էդ գանգը,  
Էլ ի՞նչ Բոո, ի՞նչ Ֆստան,-  
Ճստաց Բոոն ճստճստան:
- Լռի՛, հանդուգն,  
Կոտորվե՛ք դուք,  
Վախկողներիդ ես թաղեմ,  
Ճառ ասե՞մ, թե գանգ կախեմ,-  
Գոչեց ջոջը,  
Քաշեց պոչը:

### **Նապաստակները**

Նապաստակներն ամբողջ ցեղով  
Անտառի մեջ արին ժողով:  
Եվ ժողովում մի ծեր Շլդիկ  
Ասաց. – Լսե՛ք, մեծ ու պստիկ,  
Շուկը հաչե,

Քամին փչե,  
Ամպը գոռա,  
Մուկը ճռռա,  
Մեր էս ցեղը  
Հա կդողա:

Էսպես ապրել չի կարելի  
Էս աշխարհում փորձանքով լի,  
Չարն ու բարին աշխարհի հետ,  
Թողնենք, գնանք, լցվենք մի գետ...  
Շլդիկները՝ ոչ այս, ոչ այն,  
Ելան, ընկան մահի ճամփան:  
Հենց որ եկան գետին մոտիկ,  
Էս գորտերը մեծ ու պստիկ  
Խառնիխուռը  
Ընկան ջուրը:

Իսկույն այստեղ մի այլ շլդիկ.  
– Դարձե՛ք, – կանչեց, – պապիս որդիք,  
Էլ մի կախեք ձեր քթերը,  
Մեզնից վախկոտ են գորտերը:

### **Ագռավն ու աղվեսը**

Բախտի բերմամբ,  
Թե պատահմամբ,  
Մի մեծ ագռավ  
Մի գուլնդ պանիր  
Դաշտում գտավ,  
Կտուցն առավ,  
Ծառին թռավ:  
Օ՛, ի՛նչ պանիր, դեղին ոսկի...  
Բայց դեռ չառած համը իսկի՝  
Աղվեսն անցավ ծառի մոտով,  
Գերվեց,  
Էրվեց  
Պանրի հոտով:  
Վազեց-գնաց բերնի ջուրը,  
Եվ թուլացան կուռն ու ճուռը:

Էն ժամանակ իրա ձևին,  
Ծառնի տակից, աչքն ագռավին,  
Հեզիկ, նազիկ, փափկամազիկ  
Բացեց լեզունն անուշ-մեղուշ,  
Թափեց, չափեց շաքար ու նուշ.

– Ինչքա՛ն լավն ես,  
Ես քո գերին,  
Քո Էդ սևիկ  
Վառ աչքերին,

Նուրբ ծալքերով գույգ թևերին:  
Մի դու մտիկ,  
Էդպես քթիկ,  
Էդպես ճտիկ,

Մախմուր ազին, խաս ու դուժմած,  
Ատլասն հագին:

Գիտեմ, անշուշտ, իմ ուրիկի  
Ձայնն էլ կըլի հրեշտակի:  
Երգի՛ր, քուրի՛կ, մի՛ ամաչի,  
Իմ ուզածը մի մեծ բան չի:  
Թե որ չքնաղ Էդ տեսքիդ հետ  
Երգելում էլ եղար վարպետ  
Օ՛, կդառնաս, իմ մաքրուհի,  
Թռչունների մայր թագուհի:

Ագռավն ազին իրեն տված  
Գովեստներից շշմած, ուռած՝  
Ագռավային  
Բկովը մին,  
Որ չկռռաց,

Պանիրն ընկավ ծառիցը ցած,  
Շողոքորթը առավ, գնաց:

### **Գայլն ու գառը**

Մի ամլիկ գառ  
Իրեն համար

Ջուր էր խմում առվակից,  
Մեկ էլ դեմի ձորակից  
Գայլն է կտրում վերևը՝



Խոսքին տալով Էս ձևը.

– Էս ի՞նչ Լրբություն,

Ի՞նչ հանդգնություն,

Այ դու փսլնքոտ,

Ոչխարի Լակոտ,

Դու ինչի՞ տեր ես,

Որ գաս դնչովդ,

Քթով-պնչովդ

Ջուրս պղտորես:

Բռնեմ դունչդ,

Կտրի շունչդ:

– Մի բարկանար, պարո՛ն գայլ,

Քեզնից ցած եմ քանի քայլ,

Էնպես բան ես ասում, որ...

– Սո՞ւտ եմ ասում, ա՛յ Լղպոր,

Էս Էլ չըլնի հերվանը,

Չեմ մոռացել Էն բանը,

Որ հենց Էստեղ նույն օրը

Հայհոյեցիր իմ հորը:

– Մի տարեկան դեռ չկամ...

– Է՛հ, եղբայրդ Էր անզգամ:

– Ես մի ծին եմ մինուճար:

– Խնամիդ Էր անպատճառ

Կամ մեկը ձեր պիղծ ցեղից,

Էլ ժաժ չգաս քո տեղից,

Ձեր ծների,

Հովիվների

Ոխը քեզնից ես կհանեմ,

Տե՛ս, գլուխդ ինչ բերեմ:

Ասավ,

Հասավ

Գառանը,

Առավ, թռավ

Անտառը:

Էստեղն ի՞նչն Է գլխավոր,

Ուժեղի մոտ

Միշտ Էլ թույլն Է մեղավոր:

## Պապն ու շաղգամը

(թարգմանող թյուրև ուսերենից)

Դռան առաջ մի անգամ  
Պապը ցանեց մի շաղգամ:  
Շաղգամն աճեց, մեծացավ,  
Պապը տեսավ, զարմացավ:  
Պապը քաշեց, քաշքշեց,  
Շաղգամը հողից չհանեց:  
Պապը կանչեց տատիկին:  
Տատը՝ պապից,  
Պապը՝ շաղգամից,  
Հա քաշեցին, քաշքշեցին,  
Շաղգամը հողից չհանեցին:  
Տատը կանչեց թոռնիկին:  
Թոռը՝ տատից,  
Տատը՝ պապից,  
Պապը՝ շաղգամից,  
Հա քաշեցին, քաշքշեցին,  
Շաղգամը հողից չհանեցին:  
Թոռը կանչեց շնիկին:  
Շուկը՝ թոռից,  
Թոռը՝ տատից,  
Տատը՝ պապից,  
Պապը՝ շաղգամից,  
Հա քաշեցին, քաշքշեցին,  
Շաղգամը հողից չհանեցին:  
Շուկը կանչեց փսոյին:  
Փսոն՝ շնից,  
Շուկը՝ թոռից,  
Թոռը՝ տատից,  
Տատը՝ պապից,  
Պապը՝ շաղգամից,  
Հա քաշեցին, քաշքշեցին,  
Շաղգամը հողից չհանեցին:  
Փսոն կանչեց մկնիկին.  
Մուկը՝ փսոյից,  
Փսոն՝ շնից,

Շուկեր՝ թուռից,  
Թուռը՝ տատից,  
Տատը՝ պապից,  
Պապը՝ շաղգամից,  
Որ քաշեցին, քաշքշեցին,  
Շաղգամը հողից հանեցին: